

Պեղուած չորս կուրգաններէից ակլի նշանաւոր էր մինը: Մօտ երկու սաժէն փորելուց լետոյ բացուեցան միմեանց վրայ երեք կարգ դարսուած գերեզմաներ, որոնցից 140 հատ դուրս հանելուց լետոյ երեւաց իսկական գերեզմանը: Այստեղ կային չորս մեծ և երեք փոքրիկ երեխաների կմախքներ, որոնց մօտ գտնուեցան բրոնզէ իրեր, նիզակի ծալրեր, կաւէ ամաններ, բրոնզէ ապարանջաններ, գնդասեղներ, ուլունքներ և ալլն: Մարդկանց կմախքներից փոքր ինչ հեռու կար մի ուղտի կմախք:

Ե. Լ.

ԲԱՆԱՆՑ ԳԻՒՂԻ ԿՈՒՐԳԱՆՆԵՐԸ

Բանանց գիւղը գտնուում է Գանձակ գաւառի համանուն քաղաքի հարաւ արևմտեան կողմը, մօտ 25-ից 30 վերստ հեռաւորութեան վրայ: Գիւղը, մի կողմից շրջապատուած է բաւական բարձր անտառապատ սարերով, իսկ միւս կողմից՝ մերկ և մացառներով ծածկուած բլրակների շարքերով: Այս բլուրների շարքերի և անտառապատ սարերի միջև տարածուած է մի բաւական խոր ձոր, որի միջով հոսում է մի գետակ: Գիւղը ունի մօտ 300 տուն բնակիչ, որոնց զբաղմունքն է գլխաւորապէս ակզեգործութիւնը և երկրագործութիւնը: Այս վերջին պարապմունքի շնորհով է, որ Բանանցում, մասնաւորապէս և բլրակների շարքերի մէջ ընկնող գիւղերում, ընդհանրապէս, մեծ քանակութեամբ կուրգաններ են բացուած, որովհետև հաց ծեծելիս, լարդը քամուն տալու համար, բարձր տեղեր է հարկաւոր, որի համար էլ նրանք ընտրում են բլուրների զազաթները և կալ շինում: Այս երբ ալ նպատակով հարթում են բլուրների զազաթները, մեծ քանակութեամբ կուրգաններ են բացուած:

Այս կուրգանների միջից դուրս են եկել բազմաթիւ իրեր, որոնք դժբաղդաբար ժողովրդի տգիտութեան և մանաւանդ նախապաշարման պատճառով բոլորովին ոչնչացրուած են: Գիւղացիները ալք թանդագին իրերը սկսեալապաշտի զաղերթ են համարում, որոնք միշտ բերում են իրենց հետ մի որևէ դժբաղդութիւն: Այսպէս՝ ալք գիւղում պատմում էին, թէ մի գիւղացի իւր կալը շինելիս մի գեղեցիկ կը ձուռ է գտնում, որի չորս կողմը զանազան կենդանակերպ նախշերով զարդարուած է եղել: Նրեկոյեան տուն վերագառնալիս կձուռը

հետք բերում է տուն, սակայն նորն գիշերը պատահմամբ սատակում է խեղճ գիւղացու ջորին: Աւ ահա պառաւանները զուտ տալով գլխնե-
րին գալիս են ահն համոզման, որ սկոսպաշտի զաղըն սպանեց ջո-
րին և նախապաշարումից զբողւած՝ անմեղ կճուճը վիշտակուց լետոց
նորից լանձնում են հողին:

Մի ուրիշ գիւղացի էլի կալը շինելիս մի բրօնզէ անօթ է գըտ-
նում, որ եզան գլխի մեծութեամբ և նմանութեամբ է լինում: Արե-
կային սուն գնալիս գործիքների հետ տուն է տանում և եզան գը-
լուխը: Միւս առաւօտ հանգից հովիտները լուր են բերում թէ գալլը
վիրաւորել և սպանել է իւր ձիուն: Այս վորձանքն էլ վերագրելով
խեղճ եզան գլխին՝ անողորմաբար մուրճով ձեծակուց լետու, լանձ-
նում են գետակի հոսանքին: Աւ ալպէս անթիւ առասպելացրած
զէպքեր, թէ ինչպէս ալս ինչ գիւղացին սկոսպաշտի զաղը տարաւ
տուն, որդին մեռաւ, թէ ահն ինչի էջը սատակեց, երբորդի բաղը
զող մտաւ, չորբորդի խտը ալրուց, հինգերբորդի որդին գիւահար
եղաւ—խելագարուց—և ալլն և ալլն:

Կալին երիտասարդներ էլ, որոնք ձերբրի պատմութիւններին
թերահաւատութեամբ էին վերաբերում և թւում էին մի քանի կեն-
դանի անձնաւորութիւններ, որոնց մօտ դանում են սկոսպաշտի
զաղերս, բալց որոնց բնտանիքները ոչ մի վտանգի չէին ենթարկուել:
Նրանք պատմում էին, թէ մի գիւղացի իրենց տան հիմքը փորելիս
բրօնզէ օղակներ է գտել, որոնցից ամենահաստը և գիմացկունը զու-
թանի վերայ է խփել: Թէ ահն ինչ ձերունին իրենց կալից գտած
նիզակի ծալը իւր ձեռքի գաւազանի ծալրին է ամրացրել, թէ եր-
բորդը, իրենց կալից գտած քոյին (կճուճը) գրել է հաւաքուճը և
հաւի կուտը լցրել մէջը, որի շնորհիւ հաւերը աւելի շուտ և շատ ձու
են ածում:

Աս որոնցի վերուլիշեալ իրերի տէրերին, խնդրեցի, փող տա-
ջարկեցի, որ տան իրերը, բալց նրանք մերժեցին, բերելով իրենց
անհեթեթ աւարկութիւնները, թէ, եթէ օղակը տալ, գութանը քա-
րի կը գալ և գործը անլաջող կը գնալ, եթէ նիզակը տալ, առողջու-
թիւնն էլ հետը կը քալքալուի, եթէ կճուճը տալ, հաւերը ալլ ևս ձու
չեն ածիլ և կը ջարդուին:

Հազար գու բացատրի՛ր, հասկացրո՛ւ, որ ալզ գիւղացիներին
պատահած զէպքերը ո՛չ մի կապ չունին սկոսպաշտի զաղերի: Հետ,
որ պատահած գծրագղութիւնները բոլորովին ուրիշ պատճառներից
են, նրանք չեն հասկանալ, չեն համոզուիլ: Նրանք կշարունակեն
պատմել զարձեալ հազարաւոր զէպքեր իրենց պապերից և շրջակալ

գիւղերից լսած և կը պնդեն, որ սկուսապաշտի անիծուած զաղերըս միանգամայն վնասակար են իրենց համար:

Այսպէս ուրեմն՝ Բանանց, ինչպէս և՛ ուրիշ շատ գիւղերի բնակիչները հաստատ համոզմունք են կազմել, որ հին կուլտուրայի թանգագին մնացորդները իրենց հետ դժբաղդութիւններ են բերում:

Վերոյիշեալ հանգամանքները աչքի առաջ ունենալով, ամէն ջանք գործ էի դնում, գոնէ, իմ Բանանց գիւղում եղած միջոցին զբտընուած իրերը ազատելու գիւղացու աւերիչ ճիրաններից. փող խոտացալ, գիւղացիներին խնդրեցի, որ եթէ մէկ էլ կալեր շինելիս մի որեէ գերեզման բացուի կամ մի հին իր գտնուի, անմիջապէս ինձ իմաց տան, խոտտանալով պէտք եղած դէպքում մշակ վարձել, կամ նոյն իսկ անձամբ աշխատել: Բացի դրանից, ևս ամենապիտ օր, որոշ ժամերին գնում էի կալերը, 2—3 ժամերով թափառում էի բլրակների շարքերի մէջ գտնուած շինուելիք և շինած վերջացրած կալերին զիտելու: Շատ քիչ բացառութեամբ, բոլոր շինած կալերի ասիերը դարտուած են ահագին մեծութեան ողորկ գետաքարեր, որոնք ցոլց են տալիս, թէ այդ կալերը շինելիս կուրգաններ են բացւել: Իսկ թէ քնչ է եղել դրանց միջից դուրս եկած հին իրերը. անշուշտ անողորմաբար փչրուել կամ ծեծուել և ապա հողին կամ գետի հոսանքին են լանձնուել: Պէտք է արտեղ նկատել, որ Բանանց գիւղի կալերը մեծ մասով գտնուում են դէպի Գանձակ տանող ճանապարհի և ձորի ձախ ասիից բարձրացող մի բաւական մեծ բլրի լանջին կպած փոքրիկ բլուրների գագաթների վերայ:

Մի անգամ զբոսնելիս պատահեցի մի փոքրիկ բլրի, որի մի երեսը քանդել, հարթել էին, իսկ միւս երեսը դեռ ևս մնում էր: Մտեցալ և տեսալ, որ այդ բլուրը կուրգաններից շինուած արհեստական բլուր էր: Գիւղացին մեծակ լինելով չէր կարողացել կուրգանների հսկայական գետաքարերը զլորել, այլ փափուկ հողը մաքրել էր, իսկ կուրգանները ամբողջովին մնացել էին հողի մակերևութի վերայ, միմեանց վերայ դասաւորուած: Արժէր լուսանկար պատկերը վերցնել, մի աւելի պարզ գաղափար տալու համար, սակայն ափսոս որ միջոց չկար: Անմիջապէս վերադարձալ գիւղ, գտալ կալի տիրոջ և լատնեցի որ ինքս անձամբ պէտք է աշխատեմ, արն պայմանով, որ կուրգաններից դուրս եկած իրերը վերցնեմ ինձ: Գիւղացին հեշուութեամբ համաձայնուեց, որովհետև աշխատողի կարիք ունէր: Միքանի օր չետոյ սկսեցինք մեր աշխատանքը: Միքանի ուրիշ զիւղացիների օգնութեամբ, կուրգանների վերայի ահագին մեծութեամբ գետաքարերը զլորեցինք: Կուրգանների բերանը բացուեց: Սակայն կուրգանների միջից իմ սպասածից շատ քիչ բան դուրս եկաւ, այն է՝ մի

լաճնարերան սև կաւից շանախ, չուլունքներ կարմիր ապակուց, քարից մի լաճնարերան սև կաւից ցածր ափսէ, որը խոնաւութիւնից փխրուն լինելով չկարողացաւ ամբողջովին հանել, այլ միայն մի փոքրիկ կտորը հազիւ ձեռքի եկաւ, և չնտղ մարդկանց շատ փրկութուն ածիւններ, Հոգեկան մեծ բաւականութեամբ լցուած, հանած իրերը ձեռքիս վերադառնում էի տուն, երբ պատանցի մի խումբ գիւղացիների, որոնք գնում էին հողի մէջ թաղուած կուրգանի վերալի քարերը գլորելու Անմիջապէս մասնակցեցի նրանց աշխատանքին։ Փարերը գլորուեցին, Գիւղացիները շարունակեցին քարերը գէպի կալի ափերը գլորել, իսկ ես հետաքրքրութիւնից վերցրի բահը և մի երկու բահ չէի զարկել, երբ մի կնուճի բերան երեաց։ Ուրախութիւնից կանչեցի գիւղացիներին գիւտս տեսնելու համար, բայց նրանց համար այդ բանը շատ սովորական էր։ Նրանք հէնց այդ միջոցին ցուց տուին ինձ այդ կուրգանի կողքին գտնուած մի ուրիշ կուրգանից դուրս եկած կնուճի կտորտանքը, որ իրենք անողորմաբար փշրտել էին։ Գիւղացիները շարունակում էին իրենց աշխատանքը, իսկ ես մեծ եռանդով և հոգեկան բաւականութեամբ փորում էի կուրգանը։ Միքանի անգղոջ բահ զարկելուց չնտղ բացուեցին ուրիշ երկու, նոյն մեծութեամբ կնուճներ, սակաւն արդէն փշացած, բահիս եռանդուն հարուածներից փշուած։ Այդ երեք կնուճներից հազիւ հազ չաջողուեց մէկը ամբողջովին հանել։ Կուրգանից դուրս եկաւ և մարդու ոսկորներ, որոնք չափից դուրս փխրուն էին։

Այս գէպից միքանի օր չնտղ, երեկոյեան սեճեակս մտաւ մի գիւղացի ձեռին թաշկինակով փաթաթած մի ինչ որ իր։ Այդ գիւղացին լսել էր որ ես հին իրեր փողով եմ գնում, այդ օրուաւ իրենց կալից գտած բրօնզէ իրերը լցրել էր թաշկինակը և բերել ինձ։ Շատ ուրախացաւ, ինչ որ ուզեց տուի իրերը առաւ։ Միւս օրն էլ անձամբ գնացի դուրս եկած տեղը չափեցի։ Այդ գիւղացին պատմեց, որ այդ նոյն կուրգանի կողքին անցեալ տարի էլի մի կուրգան էր բացել, որի միջից մի բրօնզէ զանակ, մի ապարանջան և մի հատ էլ կեռ, ծալը կտարած սուր էր հանել և Գանձակից եկած մի մարդու վրայ ծախել, որը, ինչպէս չնտղ լսեցի, ուզարկել էր Պետերբուրգի հնագիտական ընկերութեան և 25 ռուբլի նուէր ստացել։

Ալժմ անցնենք մեր աչքով տեսած կուրգանների և նրանց միջից դուրս եկած իրերի մանրամասն նկարագրութեանը։

Կուրգանները իրենց արտաքին կազմութեան նախելով կարելի է երկու տեսակի բաժանել, այն է.

Ա) 8 մեծ ողորկ դետաքարերից շինուած, զանազան ուղղութեամբ դասաւորուած քառանկիւնաձև կուրգաններ, որոնց երկա-

բուժիւնը $2\frac{1}{4}$ արշինից $3\frac{1}{4}$ արշ., իսկ լաւնութիւնը $1\frac{1}{2}$ արշինից $2\frac{1}{4}$ արշինի է հաւասար: Գետաքարերը հետեւեալ կերպով են դասաւորած. մի մի հատ գլխի և ոտների տակ, երկ-երկու կողքերում, երկու հատ էլ լաւնութեամբ կուրգանների վերայ դրած: Մի քիչ առաջ նկարագրած արհեստական բլուրը այս տեսակ կուրգաններից է բաղկացած և գտնուում է $2\frac{1}{2}$ -ից մինչև 5 արշ. խորութեամբ բլրի գագաթին:

Բ) Փոքրիկ 10 ֆունտ ծանրութիւն ունեցող կլոր դետաքարերից և կաւից շինուած կամարաձև կուրգաններ, որոնց երկարութիւնը և լաւնութիւնը առաջին տեսակի չափ է, բայց սրանք գտնուում են աւելի հարթ և ցած մասերում և ունին միջին թուով 2 արշին խորութիւն հողի մակերևութից: Այս կուրգանները ըստ երևութիւն աւելի ուշ ժամանակի գերեզմաններ են:

Առաջին կարգի կուրգաններն էլ, ըստ ներքին բովանդակութեան 3 տեսակի կարելի է բաժանել, որ են.

1) Որոնց միջից դուրս են գալիս մարդու շատ փոքր—փոսած ոսկորներ և 3 հատ էլ հաստափոր կճուճներ: Զգուշութեամբ քանդելիս տեսալ որ մարդու գլուխը ուղղուած է դէպի հիւսիս-արևելեան կողմը: Այս վերջին հանգամանքի շնորհիւ է, որ տեղացիները գերեզմաններին անուանում են սկուսպաշտի գերեզմաններո, իսկ դրանց միջից դուրս եկած իրերին՝ սկուսպաշտի զաղերո: Նրեք կճուճներն էլ դասաւորուած են գլխի վերեւ այսպէս. մէկը գագաթին, իսկ միւս երկուսը, երկու ուսերին: Այս տեսակ կուրգանների միջի դատարկ տարածութիւնը համեմատաբար քիչ է. հազիւ $\frac{1}{3}$ արշ. բարձրութիւն ունենալ:

2) Որոնց միջից դուրս են գալիս մի լաւնաբերան կաւէ շանախ կամ կաւէ ափսէ և լուլունքներ (մարգարիտ) ապակեակ, ոսկրից և քարէ: Մարգարիտները դուրս են գալիս կուրգանի մէջ գլուխը ունեւած դեղնագոյն շերտից, որը հաւանականաբար կմախքի հետքեր են: Այս տեսակ կուրգանների միջի դատարկ տարածութիւնը շատ է, $1-1\frac{1}{2}$ արշ., այնպէս որ մարդ չոքած կարող է ազատ շարժուել: Այս տեսակներին էլ տեղացիները «սկուսպաշտի տուն» են անուանում:

3) Որոնց միջից դուրս են գալիս միմիայն մարդու ոսկորներ, որոնք շատ փոսած են լինում, այնպէս որ ձեռքի չեն գալիս: Անձամբ փորելիս, շատ աշխատեցի դոնէ գանգը ամբողջովին հանել, չլաշողուեց—փշրուեց: Այս տեսակ կուրգանների դատարկ տարածութիւնը միջակ է: Կմախքի գլուխը էլի դէպի հիւսիս-արևելք էր ուղղուած:

Նրկրորդ կարգի կուրգաններից միմիայն մէկն եմ ես անձամբ տեսել, որի միջից դուրս է եկել բրօնզէ և ոսկրէ իրեր և կմախք, դարձեալ շատ փոսած: Այս տեսակ կուրգանների դատարկ տարածութիւնը շատ աննշան է:

Իսկ միւսը, այդ նոյն կուրգանի կողքին առաջի տարուայ զբտած կուրգանը, զիւրացու պատմածի համաձայն նոյն ձերն է եղել, սակայն միջից դուրս է եկել մի դանակ, մի սուր և մի հատ էլ հաստ ապարանջան:

Իմ կարծիքով այս երկրորդ կարգի երկու կուրգաններից մէկը տղամարդու զերեզման է, որովհետև սուր ու դանակ է դուրս եկել, իսկ միւսը կնոջ, որովհետև դուրս եկած բրօնզէ իրերը կանացի դարգեր են: Առաջին կարգի կուրգաններից դուրս եկած և ինձ մօտ զբարնուած իրերն են.

Մի հաստափոր, նեղ բերանով և դրամաձև ունկով կճուճ—տեղացիների անուամբ քոցի, որի փորի շրջապատը հաւասար է 90 սանտիմետրի, բերանի տրամագիծը 9 սանտիմետրի, իսկ ունկի տրամագիծը 4 սանտիմետրի: Կճուճը շինուած է սև կաւից: Կճուճի վերայ աչքի ընկնող նախշեր չկան, միայն ունկի և բերանի մէջտեղի տարածութիւնը զարդարուած է զուգանեռական բարակ և բեկեալ հաստ զծերով: Կճուճի բարձրութիւնը հաւասար է 27 սանտիմետրի:

Մի լալնաբերան, ցածր, սև կաւից շինած չաճախ, որի բերանի տրամագիծը հաւասար է $13\frac{1}{2}$ սանտ., փորի շրջապատը 51 սանտ., իսկ չաճախի խորութիւնը 9 սանտ.: Փորի շրջապատը զարդարուած է թէք միմեանց հատող զուգանեռական զծերով, որոնք հասուելով զուգանեռակերպներ են կազմում:

Մի՝ 2 սանտ. խորութիւն ունեցող լալնաբերան ավաւէի կտոր, որի վերայ ոչ մի նախշի հետք չկալ:

5 փոքրիկ քարէ և մի քանի կարմիր ապակուց շինած մարդարիտներ, երկու հատ իրար կպած շատ փոքրիկ կապտադոյն լուլունքներ, որոնց ինչից շինածը չկարողացալ իմանալ:

Երկրորդ կարգի կուրգանից դուրս եկած բրօնզէ իրերն են.

Երկու հատ շրջանաձև գօտու թիթեղներ (թոփեր), որոնց տրամագրծերը հաւասար են 13 սանտ.: Թիթեղների վրայ կալ մի ուռուցիկ շրջան $9\frac{1}{2}$ սանտ. տրամագծով և 5 հատ դմբեթաւար ուռուցքներ, որոնցից 4-ը փոքրիկ $1\frac{1}{2}$ սանտիմ տրամագծով են և սեղանակերպ են դասաւորուած, իսկ հինգերորդը աւելի մեծ—3 սանտ. տրամագծ. և երկու ուռուցքներով իրար մէջ, որի չորս կողմում կէտեր կան, որի վրայ էլ երկու հատ $\frac{1}{2}$ սանտ. տրամագծով ծակեր կան: Թիթեղների ավերը զուգանեռական փոքրիկ ուռուցքներով է զար-

դարած: Այս երկու թիթեղներից մէկի լետեի մասի ակերը փշացած է:

Չորս հատ ապարանջան, որոնցից երեքը աւելի հաստ և մեծ են, քան չորրորդը: Երեք հաստ ապարանջանների ծալերը միացած չեն միմեանց հետ, այլ մօտ 1 սանտիմ. բաց տարածութիւն է մնում. ալդ շմիացած ծալերը վիճտաձև են: Սրանց վերայ կան զուգահեռական և ուղղահայեաց գծեր—նախշեր: Այս երեք ապարանջանների տրամագիծը հաւասար է մօտ $26\frac{1}{3}$ սանտիմ., իսկ հաստութիւնը մէկ սանտիմետրի: 4-րդ ապարանջանի ծալերը միացած են և դարձեալ զուգահեռական գծեր—նախշեր կան վերան. սրա տրամագիծը հաւասար է 2 սանտ., հաստութիւնը $\frac{1}{2}$ սանտ.:

Մի մուրամփոփի նմանութեամբ մեծ և զոգաւոր իր, որի զոգաւոր մասում մի ունկ կալ: Վերան ոչ մի նախշի հետք չի երևում:

Երեք զուգ թռչուններ, որոնցից առաջին զուգը առանց ոտների է, ունի մօտ 4 սանտ. բարձրութիւն և 5 սանտ. երկարութիւն. երկրորդ զուգը երկու ոտնանի է, ունի 5 սանտ. բարձրութիւն և $5\frac{1}{2}$ սանտ. երկարութիւն. երրորդ զուգը երեք ոտնանի է և առաջին զուգի մեծութեամբ է: 3 զուգ թռչունների մէջքի վերայ ունկեր կան, իսկ կողքերը և տակը զարդարուած են հակառակ դիրքով դասաւորուած եռանկիւնաձև կտրտուած քներով:

Չորս հատ թիթեղեալ շրջանաձև տափակ օղակներ, որոնց տրամագծերը $6\frac{1}{3}$ սանտ., իսկ շրջապատը 16 սանտ. է: Այս օղակների տրամագծի երկու ծալերում ամբացնելու ծակեր կան:

Երկու հատ կշեռքի նժարի նմանութեամբ զոգաւոր իրեր, որոնց զոգաւոր մասում 4 հատ իրար դէմ դրուած ունկեր կան. Գրանց տրամագիծը հաւասար է 7 սանտ., իսկ շրջապատը 20 սանտ.:

Երկու զուգ բրդաձև օղեր, որոնց մէջ մոխրագոյն քար է դրած: Իւրաքանչիւր զուգը միացած են իրար հետ փոքրիկ օղակով: Օղակների բարձրութիւնը հաւասար է $3\frac{1}{2}$ սանտ., իսկ հիմքի տրամագիծը $1\frac{1}{2}$ սանտ.:

Երկու հատ կիսալուսնաձև, քրմական դաւաղանի զլխի նմանութեամբ իրեր, մէկը միւսից մի փոքր մեծ է: Երկուսն էլ զարդարուած են եռանկիւնաձև կտրտուած քներով: Երկուսն էլ ունին զուրս ընկած մասեր, որոնց ծալերում ծակեր կան: Գրանցից մէկի կիսաշրջանի երկայնութիւնն է $17\frac{1}{3}$ սանտ., իսկ միւսինը 15 սանտիմետր:

Երկու հատ բրօնզէ հաստ թելից շինած կոշտ շղթաներ, մօտ 39—40 սանտիմետր երկարութեամբ:

Ութը հատ բրօնզէ թիթեղից շինած խողովակներ, որոնց եր-

կարութիւնը հաւասար է 18 սանտ., իսկ խողովակի տրամագիծը $1\frac{1}{4}$ սանտիմ.: Սրանք էլ կոշտ շինուած իրեր են:

Մի $15\frac{1}{2}$ սանտ. երկարութեամբ զնդասեղ, որի հաստ ծալրում $3\frac{1}{2}$ սանտիմ. տրամագծով, զեղեցիկ ճաշակով շինուած ակ դընելու տեղ կայ:

Երկու հաս բրօնզէ հաստ թելից շինուած ականջաձև իրեր, որոնք հաւանականաբար օղի տեսակներից են:

Մի պատուանդանաձև իր, որի վերնի մասը կտարուած է, իսկ տակի մասում ոտքի հետքեր են եր.ում: Սա էլ թիթեղից շինուած է, մէջը դարձեալ մոխրադոն քար դրուած:

Երկու հաս զուգահեռակերպ մէջը դատարկ փոքրիկ իրեր:

Մի բրօնզէ, հաւանականաբար դատու թիթեղ, որի մի ծալրում ծակ կայ: Մի քիչ կտրտուած և փշացած է. վերան նախշի հետքեր չեն երևում:

Երկու հաս բրօնզէ կոճակներ և 3 հաս էլ լուլուճներ:

Հինգ հաս ոսկրէ կոճակներ, երկու ծակերով: Այս կոճակներից երկուսը աւելի բարդ շինուածքներ են:

Մի թել կարմիր ապակուց շինուած լուլուճներ, մի սանտիմ. տրամագիծ ունեցողից մինչև հաղիւ ձևով գալու մեծութեամբ:

Այս երկրորդ կարգի կուրգանից դուրս եկած իրերը իմ կարծիքով կանայի զարդեր են և մի ամիտի գաղտնիար կը տան հնագոյն ժամանակի մետաղագործութեան մասին:

Ե. Համայնեան.